

**ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

DOI: 10.54412/2738280X-2022.1.2-61

Վարդանյան Արտակ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող
artva@list.ru

Բանալի բառեր. հին հայերեն, Նախիջևան, Ագուլիսի բարբառ, Ջուղայի բարբառ, Ճահուկ-Վայքի միջբարբառ, Հյուսիսային Գողթնի միջբարբառ, բարբառային հատկանիշներ:

Նախաբան

Խորհրդային իշխանության յոթ տասնամյակներում հայաթափված Նախիջևանի տարածքը օժտված էր բարբառային խիստ բազմազանությամբ: Նախքան 1918-1920թթ. իրադարձությունները, այս երկրամասում գործառվում էր հայերենի 8 բարբառ, որից 6-ը՝ տեղաբնիկ (Ագուլիսի, Ջուղայի, Արարատյան, Արցախ-Սյունիքի բարբառներ, Ճահուկ-Վայքի և Հյուսիսային Գողթնի միջբարբառներ), 2-ը՝ ներգաղթյալ (Խոյի և Մարաղայի բարբառներ):

Ինչպես հայերենի յուրաքանչյուր բարբառում, Նախիջևանի բարբառներում նույնպես առկա էին հինհայերենյան հետաքրքիր իրողություններ, որոնց քննությունը ոչ միայն անհրաժեշտ է, այլև հրատապ:

Աշխատանքում ուսումնասիրվել են Նախիջևանի տարածքի բարբառներում պահպանված հին հայերենին բնորոշ իրողությունները: Նորույթը և նպատակն է մահացած և մահացող բարբառային այս միավորների առանձին ուսումնասիրության նյութ չդարձած իրողությունների բացահայտումը և վերհանումը:

Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա և տարածամանակյա մեթոդներով:

Հնչյունաբանական դիտարկումներ

Հնչյունաբանության առումով տարածքի բարբառներից առանձնանում է Ագուլիսի բարբառը, որը հայերենի այն սակավաթիվ բարբառներից է, որոնցում անխաթար պահպանվել է հին հայերենի բաղաձայնական համակարգը (բառասկզբի ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները մնում են նույնը՝ բ, գ, դ, ձ, ջ > բ, գ, դ, ձ, ջ)՝ բահ > բօհ, գարի > գէրի, դանակ > դանակ, ձիգ > ձիգ, ջուր > ջուր և այլն: Ի դեպ, օրինաչափությունը վերաբերում է նաև բառամիջի և բառավերջի ձայնեղներին՝ բարձր > բօձր, արջ > օռջ, դաղձ > դաղձ, ձիգ > ձիգ, էգ > ագ, խաբեմ > խաբիլ, դդում > դրնդում և այլն¹:

Գրաբարի ն վերջնահանգով բառերի ն-ն Ագուլիսի և Ջուղայի բարբառներում գրեթե լիարժեք պահպանվել է. Ագուլիսի բարբառում՝ հաճախ գաղտնավանկ ը-ի դրափոխությամբ՝ ակն > օկըն, սիսեռն > սայսսն, դառն > դօռն// դօռն, մուկն > մօկն, նուռն > նօռն և այլն²; Ջուղայի բարբառում՝ ձուկն > ձուկն, մուկն > մուկն, նուռն > նուռն, դառն > դառն, գառն > գառն, բայց՝ եզն > էգ, բեռն > բեռ, բուռն > բուռ և այլն:

Հյուսիսային Գողթնի միջբարբառում պահպանվել է հիմնականում գաղտնավանկ ը-ի դրափոխությամբ՝ ակն > օկն, թոռն > թօռն, որդն > օրն, ամառն > ամառն, ծունկն > ծօնկն և այլն: Սակավաթիվ դեպքերում առկա են նաև ն-ի անկում՝ գաղտնավանկի պահպանմամբ՝ սերմն > սիրմն, տասն > տասս(ս)ն, ն-ի պահպանում՝ գաղտնավանկի լիաձայնությամբ՝ ձուկն > ձուկն, մուկն > մօկն, կամն > կումն, ինչպես նաև ն-ի պարզ անկում՝ խուփն > խուփ, ծունկն > ծունկ, հարսն > հոսս, դաղձն > տախց, մուրն > մօթ, երդումն > ուրթուս:

¹ Հ. Աճառեան, Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 330-399:

Ս. Սարգսեանց, Ագուլեցոց բարբառը (գօկերի լեզուն), Ս., 1883, էջ 52-72:

² Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 125-127:

³ Ա. Վարդանյան, Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., 2021, էջ 24-25:

Արցախ-Սյունիքի նախիջևանյան խոսվածքներում երկու տարբերակներն էլ պահպանվել են. Գյաղի խոսվածքում՝ մուկն > *մուկ(ը)*, սերմն > *սէրմ(ը)*, հարսն > *հարս*, նուռն > *նուռ*, Շոռոթի խոսվածքում՝ խոռն > *խօռնը*, ձուկն > *ձուկնի՛*։

Հետաքրքրական է, որ Նախիջևանի բարբառներում պահպանվել են հին հայերենի բառապաշարի բառերի՝ հետաքրքիր ձևով անխաթար ամփոփված ձևեր՝ *կօզ* (< ընկոյզ), *ուսմարան* (< ուսումնարան)՝ Նախիջևան քաղաքի խոսվածքում⁵, *այք* (այգողք), *Դառանջ* (< Տեառնընդառաջ)՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում⁶ և այլն։

Ի դեպ, կրոնական եզրակացական բառապաշարում եկեղեցու, սրբավայրերի հետ կապված ամփոփված ձևեր հաճախ են հանդիպում Նախիջևանի տարածքի բարբառներում. Սըրվանէս||Սըրվանէս (< Սուրբ Հովհաննէս), Սըրգագոփ (< Սուրբ Հակոբ), Թօփառաք'էլ (< Սուրբ Թովմա Առաքյալ)՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում, Քամխաչ||Քախմաչ (< Քամո խաչ)՝ Օծոփի խոսվածքում, Սուվարթան (< Սուրբ Վարդան)՝ Աստապատի խոսվածքում, Սըրթմըշան (< Սուրբ Նշան), Սըրվան (< Սուրբ Հովհաննէս)՝ Շոռոթի խոսվածքում (Արցախ-Սյունիքի բարբառի նախիջևանյան հատված) և այլն։ Այլ տարածաշրջանների բարբառներին նույնպես բնորոշ է այս երևույթը, օրինակ՝ Զրփթօրօս (< Սուրբ Թեոդորոս)՝ Մալաթիայի բարբառում, Սըփկ'ոփ' (< Սուրբ Գևորգ)՝ Վանի, Շատախի բարբառներում, Սըվարթան (< Սուրբ Վարդան)՝ Դիաղինի բարբառում և այլն։

⁴ **Ա. Վարդանյան**, *Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում*. - «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարեւելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2022, էջ 236-251։

⁵ Նախիջևան քաղաքի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել ենք 1987-1991 թթ. (տետր հ. 445), բարբառախոսներ՝ Սիմոն Բաբայան (ծնվ. 1908, Կգնույթ), Հարություն Մկրտչյան (ծնվ. 1916, Մեսրոպական), Ռուբեն Մարտիրոսյան (ծնվ. 1917, Ազնաբերդ), Հերիքնազ Մեհրաբյան (ծնվ. 1948, Նախիջևան)։

⁶ **Ա. Վարդանյան**, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 35։

Բարբառագետ Հայկանուշ Մեսրոպյանը հնչունափոխության նման ձևերը համարում է մաշված (ամփոփված) ձևեր⁷: Համամիտ լինելով ուսումնասիրողի հետ՝ հնարավոր ենք համարում, սակայն, որ այս ձևերը առաջացած լինեն ծիսարգելի հնագույն հավատալիքների տրամաբանությամբ՝ սրբերի անունները ոչ միայն ամբողջությամբ չգրելու, այլև ամբողջությամբ չարտասանելու միտումով:

Նախիջևանի տարածքի բարբառային միավորներում առկա են նաև հինհայերենյան բառակապակցությունների բազմաթիվ ամփոփված այլ ձևեր՝ *տննրվէր* (< դար ի վեր), *կըլխըվէր* (< գլուխ ի վայր), *փըռ^hսըվէր* (< փորս ի վայր), *տէսը* (< ընդ այս) *տէղը* (< ընդ այդ), *տէնը* (< ընդ այն) և այլն:

Ձևաբանական դիտարկումներ

Նախիջևանի տարածքի գրեթե բոլոր բարբառներում ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին անխաթար պահպանում է հին հայերենի *ք* հոգնակերտը՝ կատու-*կատուք*, էգի-*էգիք* («այգիներ»), թըթո-*թըթոք* («թթուներ»), ստանա-*ստանաք* («սատանաներ»), հաքու-*հաքուք* («հորաքույրներ») և այլն (Ագլ.), կուրայի-*կուրայիք* («կրիաներ»), գ՛ոխտի-*գ՛ոխտիք* («գոտիներ»), կիրակի-*կիրակիք* («կիրակիներ»), լիգու-*լիգուք*, առու-*առուք* և այլն (Ջուղ.); կիինի-*կիինիք*, վեդրո-*վեդրոք* և այլն (Ճհկ.-Վյք.); վորթի-*վորթիք*, ճօրի-*ճօրիք*, գոլլի-*գոլլիք* և այլն (Հս. Գղթ.):

Հատկանշական է, որ Նախիջևանի տարածքի բարբառներից մեկում՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում, առկա է գրաբարի *ռ* հոլովիչը: Հայտնի է, որ հինհայերենյան *ռ* հոլովումը բառընդգրկմամբ ունի բավական մեծ սահմաններ (ածուխ-ածխոյ, ամիճ-ամճոյ, գինգնոյ, մատանի-մատանույ, քամի-քամոյ և այլն)⁸, սակայն միջբարբառում այն ընդգրկում է բացառապես *ի*-ով վերջացող բառերը՝ կաշի-*կաշօ-կաշօց-կաշօվ-կաշըմ*, վօսկի-*վօսկօ*, մըղանի-

⁷ **Հ. Մեսրոպյան**, *Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում*, Ե., 2016, էջ 44-51:

⁸ **Ա. Աբրահամյան**, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1976, էջ 38-41:

մըղանօ, հոքի-հօքօ, կիինի-կիինօ, քամի-քամօ, կարի-կարօ, Թաքօհի-Թաքօհօ և այլն: Ճահուկ-Վայքի միջբարբառը, թերևս, հայերենի միակ բարբառն է, որի անվանական հոլովման համակարգում զարմանալիորեն պահպանվել է հին հայերենի *n* հոլովումը:

Բարբառների զգալի մասում պահպանվել է հին հայերենի արտաքին թեքման *ա* հոլովումը⁹, որով թեքվում են բոլոր տեղանունները՝ *Ըրեվան-Ըրեվանա, Նախճրվան-Նախճրվանա, Ըզնապեռ¹⁰-Ըզնապեռ¹⁰թա, Ջնհրի-Ջնհրիվա* և այլն (հմմտ. Մծբին-Մծբնայ, Հոովմ-Հոովմայ):

Որոշ սակավաթիվ դեպքերում կիրառական է որոշյալի անհոդ կիրառություն. *Էն ախճիգ ո՛ւր ա քրնացել* («Այն աղջիկը ո՛ւր է գնացել»):

Ճահուկ-Վայքի միջբարբառում ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայով և *օ* (< ոյ) վերջավորությամբ (*լըսիօ, աղալօ, թրոնիլօ, պրնցանալօ, թիլանալօ*), որը նույնպես հինհայերենյան հատկանիշ է և ըստ Հ. Աճառյանի՝ բխում է բայի անորոշ ձևի սեռականից¹⁰: Թեև սահմանականի ապառնին և անցյալ ապառնին կազմվում են անորոշ դերբայով և *պիտեմ* բայի ամփոփված ձևերով (*լըսիլ՝դեմ/լըսի՛բդեմ, լըսիլ՝դիմ/լըսի՛բդիմ*), այնուամենայնիվ, շրջուն շարահասության, հարադրական բայերի և ժխտական խոնարհման դեպքերում երևան են գալիս ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևեր (*յես էմ լըսիլօ, լըսիլօ չեմ; յես իմ քրնալօ, քրնալօ չիմ, լյնց էմ ըլիլօ, պար իմ կալօ*): Մի քանի գյուղերի խոսվածքներում *պիտեմ* բայի ամփոփված ձևերով կազմված ձևերին զուգահեռ կիրառվում են նաև ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևերը (*լըսիլօ էմ, լըսիլօ իմ*)¹¹:

⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 24-27:

¹⁰ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, հ. 4, գիրք Բ, Երևան, 1961, էջ 201:

¹¹ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 100-103:

Նույն միջբարբառում, *-ից* վերջավորությանը զուգահեռ, բացառականում պահպանվել է հին հայերենի է հոլովակերտից կազմված *-էն* վերջավորությունը՝ ախպէր-*ախպօրէն*//*ախպօրից(ը)*, *սարսարէն*//*սարից(ը)*, *ծօր-ծօրէն*//*ծօրից(ը)*, *ծըմէո-ծըմէովանէ(ն)*, ամառ-*ծամառվանէ(ն)*, Աստօձ-*Ասասնէ* և այլն. *Ասասնէ էլ պան չէմ ուզըմ՝ սաղ ջան տէնասս վօչ* («Աստծուց այլ բան չեմ ուզում՝ առողջություն չունենասս»՝ անեծք): Ի դեպ, անեծքներում հաճախ կիրառական է բայի ըղձական եղանակի ժխտականի *ոչ*-ով ձևերը՝ *ոչ քընաս* («չգնաս»), *ոչ մէնձանաս* («չմեծանաս»), *ոչ քընիր* (1. «չգնայիր», 2. «չքնեիր»), *ոչ մէնձանիր* («չմեծանայիր») և այլն:

Որոշ խոսվածքներում պահպանվել է գրաբարի *է՞ր* («ինչու») հարցական դերանունը. *է՞ր իր քընացել հէրանցըղ տունը* («Ինչու էիր գնացել հորանցղ տուն») (Ագնաբերդի խոսվածք):

Հետաքրքրական են հին հայերենի *ահաւասիկ*, *ահաւաղիկ*, *ահաւանիկ* վերաբերականների տարբերակները Նախիջևանի բարբառներում. Ազուլիսի բարբառում՝ *հրէսիկ*//*հէսիկ*, *հրէտիկ*//*հէտիկ*, *հրէնիկ*//*հէնիկ*; Ճահուկ-Վայքի միջբարբառում՝ *հէսիգ*//*հէսի*, *հէղիգ*//*հէղի*, *հէնիգ*//*հէնի*; Ջուղայի բարբառում՝ *հըրէս*, *հըրէտ*, *հըրէն*; Արարատյան բարբառի Աստապատի խոսվածքում՝ *հրէսիկանկ*, *հըրէտիկանկ*, *հըրէնիկանկ* և այլն:

Ամենայն հավանականությամբ հին հայերենի *օշ* ձայնարկությունն է պահպանված Նախիջևանի հյուսիսային խոսվածքների *աշի* («մանդակ») բուսանվան մեջ (Հյուսիսային Գողթնի և Ճահուկ-Վայքի միջբարբառներ, Արցախ-Սյունիքի խոսվածքներ): Բուսանվան շատ հաճելի համը հուշում է, որ այն կարող է առնչվել հենց հին հայերենի *օշ* («երանի») ձայնարկությանը: Վերջինս այս միջբարբառներում ունի երկու ձև՝ *ւիշի* (*Աշի՛ դէ, քընանք բաղը*) («Երանի թե (լավ կլինի) գնանք այգին») և *ւիչ* (*Էս ինչ անօշ կիհի էր, ւի՛չ*) («Այս ինչ քաղցր գինի էր, օխա՛յ»):

Բառագիտական դիտարկումներ

Նախիջևանի տարածքի բարբառների բառապաշարի հիմնական մասը կազմում են հին հայերենից ավանդված բնիկ հայերեն բառերը, որոնք որոշ դեպքերում մնացել են անխաթար թե՛ բառիմաստի և թե՛ հնչյունափոխության առումով, որոշ դեպքերում՝ համապատասխան հնչյունափոխական օրենքներով հնչյունափոխվել են, որոշ դեպքերում էլ իմաստափոխվել:

Ազուլիսի բարբառում՝ *օոջ* (< արջ), *բօհ* (< բահ), *բինջյւր* (< բանջար), *գէրի* (< գարի), *դօնը/դօնը* (< դառն), *դէզիլ* (< դիզեմ), *դրծօր* (< դժուար), *իզնը* (< եզն), *ըրիսօ* (< երեխայ), *արասսուն* (< երեսուն), *հօսս* (< հարսն), *հրզզօր* (< հազար), *մըկրօս* (< մկրատ), *նըշխօր(ք)* (< նշխարք), *վօռդ* (< վարդ), *օրագ* (< ուրագ), *պատարագ* (< պատարագ), *կըծայկ* (< կծիկ), *իրիք* (< երեք), *յօգ/յօք* (< յոյգ («վեգ»)) և այլն:

Ջուղայի բարբառում՝ *յէխտ* (< աղտ + կեղտ), *ընգանել* (< անկանեմ), *յարձակել* (< արձակեմ), *ախչիկ* (< աղջիկ), *բ'ախ* (< բահ), *բ'արձ* (< բարձ), *գ'ըղակ* (< գղակ), *գ'ոլ* (< գամ), *դ'ընդում* (< դդում), *վօրդում* (< երդումն), *անգուզ* (< ընկոյզ), *մախց* (< մաղձ), *քոխցըր* (< քաղցր), *խատիճ* («ձմերուկի, սեխի կորիզ») (< հատիճ), *խինել* (< հինեմ), *մարգ'արիթ* (< մարգարիտ) և այլն¹²:

Ճահուկ-Վայքի միջբարբառում՝ *ընգանսոգ* («չորթան հարելու կավե մեծ աման») < անկանակ), *առզըլի* (< ածելի), *անգաջ* (< ականջ), *աղվէս* (< աղուէս), *ախճիզ* (< աղջիկ), *աչառ* (< արջառ), *ք'ւրանթոն* (< գերանդի), *փրոնիլ* (< բոնեմ), *պըրիլ* («փորել» (< բրեմ), *կափը* («պարանին կապվող փայտյա կեռ») (< գաբ), *կինձը* (< գինձ), *գ'ւրգիլ* («գորգի, կարպետի կարգաբերում») (< կարգեմ), *կօղիմ* (< կոտիմն), *ըլէրիք* («վառելիք») < ըրելիք < էրելիք < այրելիք) և այլն:

¹² Չ. Աճառեան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1949, էջ 351-390:

Հյուսիսային Գողթնի միջբարբառում՝ *ճոյր* (< ջուր), *ծոյվ* (< ձու), *զոյտիկ* (< զատիկ), *տոյնսկ* (< դանակ), *կոյպոտ* (< կապոյտ), *տոյնդոյմ* (< դոյմ), *սոյնդոյ* (< ընկոյգ), *կոյրոյնք* (< գարունք), *կոյրմոյր* (< կարմիր), *պոյնոյ* (< բազուկ), *հոյ* (< ուլ), *զոյլ* (< գայլ), *զոյնք* (< գառն), *զոյլ* (< գալ), *հոյնոյլ* (< ոջիլ) *հոյնոյ* (< վիշապ), *պոյմբոյկ* (< բամբակ), *օրծոյկ* («աքաղաղ») < ործակ), *պօհ* (< բահ) և այլն:

Արարատյան բարբառի խոսվածքներում՝ *կրնալ* (< գնամ), *քախծրր* (< քաղցր), *կէրէզման* (< գերեզման), *առծրլի* (< ածելի), *կօզ* (< ընկոյգ), *տէղ* (< դէղ), *մօրթէլ* (< մորթել), *կարմունջ* (< կամուրջ), *պէռ* (< բէռն) և այլն (Նխջ.)¹³; *ալատալ* (< հաւատամ), *Ասպած* (< Աստուած), *անուլ* (< անուն), *ըրխա* (< երախայ), *վօսկուռ* (< ոսկոր), *մուլ* (< մոլ), *փրթաթիլ* (< փաթաթեմ), *ժամ* («եկեղեցի») < ժամ), *հալօղ* (< խաղող), *յէղան* (< եղան), *աշկ* < աշք), *հաղալ* (< խաղամ) և այլն (Աստ.)¹⁴:

Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներում՝ *կըլօխ* (< գլուխ), *ծուլ* (< ծոմ), *վօրնք* (< որդն), *կօրնուզ* («գորտ») < գորտնուկ), *ծոյքոյր* (< ձագար), *Ջրզոյրթոյր* (< Ծառզարդար), *կարկած* («սնամեջ դոյմ») < կարկաջ), *տըխտըմօր* (< թթխմոր), *ըրխա* (< երախայ), *հոյքոյ* («պոչ») < ագի), *կոյլ* (< գամ), *քիսոյլ* (< գնամ), *ծոյվ* (< ձու) և այլն:

Հին հայերենի *բող* («բանջարի տեսակ») արմատից ածանցյալ՝ հետաքրքիր հնչատարբերակներով նույն նշանակության բառանուններ են Ագուլիսի բարբառի *բուղ*-ը, Հյուսիսային Գողթնի միջբարբառի *պուղ*-ը, Ճահուկ-Վայքի միջբարբառի *պօլի*-ն և *պօխի*-ն (միևնույն բուսատեսակի դառնավուն և քաղցրավուն ենթատեսակ-

¹³ Նախիջևան քաղաքի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով (տետր հ. 445):

¹⁴ Նախիջևան քաղաքի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով (տետր հ. 445): Պ. Պողոսյան, *Աստապատ. արարատեքն հայաշխարհ*, Ե., 2005, էջ 92-97:

ները): Հետաքրքիր է, որ *բողոք* բարբառում պետք է դառնար *պօլ*, սակայն, քանի որ հին հայերենում հոլովվել է *n* հոլովիչով (*բող-բողոք*), իսկ բարբառում միայն *h*-ով վերջացող բառերն են ստանում *n* հոլովիչը (քամի-*քամօ*, մրդանի-*մրդանօ*, հիլի-*հիլօ* և այլն), *h* ձայնավորի հավելումը տեղի է ունեցել հենց սեռական հոլովի ազդեցությամբ:

Հին հայերենից ավանդված բուսանուններից հետաքրքիր է նաև *անգուտան* բանջարանունը¹⁵, որը անխաթար՝ *անգուտան* ձևով պահպանվել է Ջուղայի բարբառում, *անգուղան* հնչատարբերակով՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում: Հ. Աճառյանը *անգուտանը* մեկնում է որպես «տեսակ մի բոյս ու համեմ»՝ *անճիտան*, *անկիտան* հնչունական տարբերակներով և ստուգաբանում որպես փոխառություն պարսկերենից (պրսկ. انگودان angudān («ոետին ունեցող մի ծառ՝ որի խեժը կոչվում է անգուժատ»)¹⁶: Ըստ երևույթին՝ այս ծառի խեժի հոտը հիշեցնող անգուտանի սուր հոտի պատճառով է բույսը կոչվել ծառի անունով: Ի դեպ, Ջուղայի բարբառում նույնպես այս բույսը *անգուտան* է կոչվում, իսկ դալար ցողունը՝ *տրղոզան*:

Տարածքի բարբառներում այնքան շատ են հին հայերենի բառապաշարի պահպանված հետաքրքիր շերտերը, որ դրանց կարելի է անդրադառնալ առանձին ուսումնասիրությամբ:

Եզրակացություն

Մինչև անցյալ դարի 80-ական թվականները Նախիջևանի տարածքում գործառած 8 բարբառները, որից 6-ը՝ տեղաբնիկ (Ագուլիսի, Ջուղայի, Արարատյան, Արցախ-Սյունիքի բարբառներ, Ճահուկ-Վայքի և Հյուսիսային Գողթնի միջբարբառներ), 2-ը՝ ներգաղթյալ (Խոյի և Մարաղայի բարբառներ), պահպանել էին հինհայերենյան յուրօրինակ իրողություններ:

¹⁵ *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 48:

Ղ. Ալիջան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն*, Վենետիկ, 1895, էջ 36:

¹⁶ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Կ. Ս., Ե. 1971, էջ 185:

Աշխատանքի արդյունքում վեր են հանվել Նախիջևանի տարածքի տեղաբնիկ բարբառներում պահպանված հին հայերենին բնորոշ հետաքրքիր *հնչյունաբանական* (հին հայերենի բաղաձայնական համակարգի պահպանում Ագուլիսի բարբառում, գրաբարի *ն* վերջնահանգով բառերի *ն*-ի պահպանում Ագուլիսի և Ջուղայի բարբառներում և այլն), *ձևաբանական* (*n* հոլովման առկայություն Ճահուկ-Վայքի միջբարբառում, *ք* հոգնակերտի առկայություն Ագուլիսի և Ջուղայի բարբառներում և այլն) և *բառագիտական* (բոլոր բարբառների բառապաշարի հիմնական մասը հին հայերենից ավանդված բառերն են՝ անփոփոխ, հնչյունափոխված կամ իմաստափոխված) իրողությունները:

Օգտագործված գրականություն

- Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
- Ալիշան Ղ., Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895:
- Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, գիրք Բ, Ե., 1961:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե. 1971:
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ, 2, Ե., 1951:
- Աճառեան Հ., Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:
- Աճառեան Հ., Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1949:
- Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
- Վ. Կատվայան, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:
- Կատվայան Վ., Հինհայերենյան մի քանի հնչյունական հատկանիշների արտացոլումը արդի հայ բարբառներում, «Ջահուկյանական ընթերցումներ», հ.1-2, Ե., 2022:
- Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 2006:
- Մեսրոպյան Հ., Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Ե., 2016:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982:

Պողոսյան Պ., Աստապատ. արաքսամերձ հայաշխարհ, Ե., 2005:

Սարգսեանց Ս., Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), Մ., 1883:

Վարդանյան Ա., Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներ
Նախիջևանի տարածքում.- «Ղարաբաղ-Շամախիի կամ
ծայրիյուսիսարեվելյան միջբարբառախումբ. արդի վի-
ճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գի-
տաժողովի նյութեր, Ե., 2022:

Վարդանյան Ա., Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե, 2021:

Վարդանյան Ա., Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004:

Համառոտագրությունների ցանկ

Ագլ. – Ագուլիսի բարբառ

Աստ. – Աստապատի խոսվածք

Արտ. – Արարատյան բարբառ

Արց.-Սյն. – Արցախ-Սյունիքի բարբառ

Հս. Գղթ. – Հյուսիսային Գողթնի միջբարբառ

Ճհկ.-Վյք. – Ճահուկ-Վայքի միջբարբառ

Նխճ. – Նախիջևանի խոսվածք

Ջուղ. – Ջուղայի բարբառ

Vardanyan Artak – Realities of the Classical Armenian Language in the Dialects of the Territory of Nakhijevan.– Until the 80s of the last century, 8 dialects used in the territory of Nakhijevan (Agulis, Jugha, Ararat, Artsakh-Syunik dialects, Jahuk-Vayk and Northern Goghtn interdialects), 2 – immigrants (Khoy and Maragha dialects), preserved the peculiar realities of the Classical Armenian language.

The paper studies interesting *phonetic* (preservation of the consonant system of the Classical Armenian language in the Agulis dialect, preservation of the sound *ú* in words with the ending *ú grabar* in the Agulis and Jugha dialects, etc.), *morphological* (the presence of the declension *o* (< *nj*) in the Jahuk-Vayk interdialect, the presence of the plural ending *p* in the

Agulis and Jugha dialects, etc.) and *lexicological* (the main part of the vocabulary of all dialects is made up of words that have come down from Classical Armenian: without phonetic changes, with phonetic changes or with a changed meaning) realities characteristic of the Classical Armenian language preserved in autochthonous dialects in the territory of Nakhijevan.

Key words: Classical Armenian language, Nakhijevan, Aguli dialect, Jugha dialect, Jahuk-Vayk interdialect, North Goghtn interdialect, dialect features.

Artak Vardanyan, Doctor of Philology, Senior Researcher of the Dialectology Department of the R. Acharyan Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia, phone: 091484601, e-mail: artva@list.ru, artva4444@gmail.com .

Варданян Артак – Реалии древнеармянского языка в диалектах территории Нахиджевана.– До 80-х годов прошлого века 8 употребляемых на территории Нахиджевана диалектов (агулисский, джугинский, араратский, арцах-сюникский диалекты, междиалекты джаук-вайкский и Северного Гохтна), 2 – переселенцев (хойский и марагинский диалекты), сохранили своеобразные реалии древнеармянского языка.

В работе исследованы сохранившиеся в автохтонных диалектах на территории Нахиджевана характерные для древнеармянского языка *фонетические* (сохранение системы согласных древнеармянского языка в агулисском диалекте, сохранение звука *ĭ* в словах с окончанием *ĭ* грабара в агулисском и джугинском диалектах и т.д.), *морфологические* (наличие склонения *o* (< *ny*) в джаук-вайкском междиалекте, наличие окончания множественного числа *ϑ* в агулисском и джугинском диалектах и т.д.) и *лексикологические* (основную часть лексики всех диалектов составляют слова, дошедшие из древнеармянского: без фонетических неизменений, с фонетическими изменениями или же с измененным смыслом) интересные реалии.

Ключевые слова: древнеармянский язык, Нахиджеван, агулисский диалект, джугинский диалект, джаук-вайкский междиалект, междиалект Северного Гохтна, диалектные признаки.

Артак Варданян, кандидат филологических наук, старший научный сотрудник отдела диалектологии Института языка имени Р. Ачаряна

НАН РА, телефон: 091484601, электронная почта: artva@list.ru,
artva4444@gmail.com .